ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Իտալիայի Հանրապետություն (Թուրին) գործուղման արդյունքների մասին

1. Անունը, ազգանունը.

Լյուբով Գևորգյան

2. Զբաղեցրած պաշտոնը.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության աշխատանքի և զբաղվածության վարչության աշխատանքի և աշխատանքի վարձատրության քաղաքականության բաժնի պետ.

3. Գործուղման վայրը և ժամկետները.

Իտալիայի Հանրապետություն (Թուրին), 2025 թվականի մայիսի 25-31-ը.

4. Հրավիրող կողմը.

Աշխատանքի միջազգային կազմակերպություն

5. Գործուղման նպատակը.

Մասնակցություն «Աշխատանքի միջազգային ստանդարտների ակադեմիա» խորագրով դասընթացին, որի նպատակն էր աշխատանքի միջազգային չափորոշիչների առնչությամբ ընթացակարգերին և ԱՄԿ անդամ պետություններին այդ չափորոշիչների նկատմամբ կանոնադրական պարտավորություններին մանրամասն ծանոթացնելը: Դասընթացը նաև ուսուցողական էր կոնվենցիոն պարտավորություններն իրականացնելիս համապատասխան գիտելիք ունենալու տեսանկյունից, սոցիալական գործընկերության դերի կարևորության ընկալման

առումով ևս: Դասընթացն իրականացվել է մայիսի 12-ից 23-ը առցանց ձևաչափով, այնուհետև մայիսի 26-ից 30-ը Թուրինում՝ ֆիզիկական ներկայության ձևաչափով:

6. Քննարկված թեմաները.

- Աշխատանքի միջազգային չափորոշիչների (ILS) համակարգ. հիմնական բնութագրերը և ILS ընթացակարգերը՝ ստանդարտ սահմանումից մինչև ազգային կիրառում:
- ILS բովանդակությունը ընտրված տարածքներում:
- NORMLEX տվյալների բազա և այլ ռեսուրսներ և ILS աղբյուրներ:
- ILS-ը աշխատանքի փոփոխվող աշխարհում.
- Պլատֆորմային տնտեսության մեջ արժանապատիվ աշխատանքի իրականացում
- Պաշտպանություն աշխատանքային միջավայրում կենսաբանական վտանգներից
- Աշխատանքային վնասվածքներից համապարփակ պաշտպանության ձեռքբերում

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.

Դասընթացի ղեկավարը Թուրինի ուսումնական կենտրոնի աշխատանքի միջազգային ստանդարտների, աշխատանքային իրավունքների և գենդերային հավասարության ծրագրի գծով համակարգող, վերապատրաստող Մաուրա Միրալոն էր: Դասընթացի լեզուն անգլերենն էր:

Մասնակիցների շարքում ընդգրկված էին այն մարդիկ, որոնք իրենց աշխատանքի բնույթով անմիջականորեն առնչվում էին ԱՄԿ կոնվենցիաների կիրարկման վերաբերյալ զեկույցների մշակման և ԱՄԿ կենտրոնակայան ներկայացման հետ, ինչպես նաև աշխատողների և գործատուների շահերը

ներկայացնող կազմակերպությունների ներկայացուցիչներ, դատավորներ (Հայաստանի Հանրապետությունից մասնակցում էին նաև Հայաստանի արհմիությունների կոնֆեդերացիայի, Հայաստանի գործատուների հանրապետական միության ներկայացուցիչները, ինչպես նաև Երևանի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր):

Դասընթացի ընթացքում ներկայացվել է ԱՄԿ մանդատը: Աշխատանքի միջազգային չափորոշիչների կիրարկման մեխանիզմները, կոնվենցիաների վավերացման գործընթացները: Դասընթացի շրջանակում ներկայացվել է պլատֆորմային տնտեսության մեջ արժանապատիվ աշխատանքի իրականացմանը, աշխատանքային միջավայրում կենսաբանական վտանգներից պաշտպանությանը, ոչ ֆորմալ տնտեսության դեմ պայքարի նորարարական մոտեցումների և արժանապատիվ աշխատանքի խթանման նպատակով անցումը դեպի ֆորմալ տնտեսությանը վերաբերելի դրույթներ, որոնք ներառված են նաև Ժնևում կայանալիք Աշխատանքի միջազգային կազմակերպության (ԱՄԿ) Համաժողովի 113-րդ նստաշրջանի օրակարգում՝ ի հավելումն մշտական հարցերի:

Դասընթացը հետաքրքրական էր նրանով, որ տեղում կատարում էինք խմբային աշխատանքներ, ունենում էինք ելույթներ: Դասընթացի շրջանակներում ներկայացրել եմ ՀՀ-ում ազգային զեկույցների մշակման գործընթացը:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Դասընթացի արդյունքում որոշումներ չեն ընդունվել, պայմանավորվածություններ ձեռք չեն բերվել, փաստաթղթեր չեն ստորագրվել:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

Դասընթացին մասնակցությունը կարևորում եմ նրանով, որ Հայաստանի Հանրապետությունը ԱՄԿ-ի անդամակցության շրջանակներում ԱՄԿ կենտրոնական է ներկայացնում ազգային զեկույցներ ԱՄԿ վավերացված և չվավերացված կոնվենցիաների կիրարկման վերաբերյալ և աշխատանքի միջազգային չափորոշիչների համակարգի ուսումնասիրումը խթանում է գործընթացի պատշաճ իրականացմանը: Բացի այդ, աշխատանքի փոփոխվող աշխարհում անհրաժեշտ է շարունակաբար զարգացնել ունեցած գիտելիքները: Ուստի, առաջարկում եմ նմանատիպ դասընթացները շարունակական լինեն, և ստեղծել հնարավորություն՝ դասընթացին ավելի շատ մասնագետներ ներգրավելու:

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

04.06.2025